

թիւնը զայն իր կորսուած մասերով Եղիշէի Պատմութեան կից գտած էր: Եղիշէ Բ. Վարդանանց պատմիչը ուզած է նաև Ա. Վարդանանց միեւնոյն նպատակին համար նահատակութիւնը պանծանցնել, երկուքն ալ ի միմիջարեւութիւն անոնց, որոնք իրրեւ խոտովանողներ կը պանդխտէին օտարութեան մէջ իրեն հետ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԲՐՐՉՐ ՀՈՅՔԻ ՎՆԵՔԵՐԸ

(Շարունակութիւն եւ վերջ):

Ե.

ՍՊՅԵՐԻ, ԲԱԲԵՐԴԻ ԵՒ ԹՈՐԹՈՒՄԻ ՎԱՆՔԵՐԸ

Այս երեք վիճակներու կամ գաւառակներու¹ վանքերու մասին լաւագոյն համարեցայ միասին խօսիլ: Ասոնք կը գտնուին Կարնոյ հիւսիսային կողմը եւ յետագային անոր կուսակալութեան մաս կազմած, (նաև կրօնական կամ եկեղեցական վարչութեամբ), մինչդեռ յառաջ կը վերաբերէին Բարձր Հայքի, Տայքի եւ Սաղարի: Բարձր Հայքի գաւառներէն է նաև Շաղապուճ կամ Շաղապուճ, որ Տայքի Ռքաղէ (Թորթում) գաւառին մերձ է:

Յ. Կարնեցիի տեղեկութիւններու համաձայն այս վայրերու մէջ բաւական թուով վանքեր հիմնուած ու բարձրացած են (Տեղագիր Վեր. Հայոց, էջ 15), սակայն դժբախտաբար անոնցմէ սակաւներու անունն ու պատմութիւնը մեզի հասած է:

1. ԱԳՐԿԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Աւետիք արեղան Շարակնոց մը կը գրէ՝ «Ի գաւառն Սախուա եւ Թորթումայ (Թորթումայ) ի վանս, որ կոչի Ագրկի² ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի ի թուին Հայոց Ձէ»: Ստացողն է Սաղատուր եպիսկոպոսը (Ակինեան, Հաւաք. յիշատ. էջմ. Գէորգ. Վարդապետի մէջ):

¹ Պայազիտ-Ապերի վանքերու մասին՝ այլուր:
² «Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց Ձէ (1455) ի գաւառս Սախուայ եւ Թորթումայ ի վանս որ կոչի (ճանօթութեան մէջ զբուսած է՝ եղծեալ, բայց թէսութեամբ Ագրկի սոչ արժ. Ա. Վ. Թոփմանեան) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի լուսազարդ տաճարին եւ... ձեռամբ անարհեստ գրչի Աւետիք արեղայի» (Նոտարք, էջ 179):

592): — Սախ անունը գիւղ մը կայ Եկեղեաց գաւառի մէջ եւ համանուն գիւղ մը ու վանք մը կայ յանուն Ս. Աստուածածնի Թորթումի գաւառին մէջ: Հմմտ. Սախուա Ս. Աստուածածին ի Թորթում կամ Ռքաղէ:

2. ԱՆԼՈՅ ԿԱՄ ԱՅԼՈՅ ԿԱՄ ԱԼՆՈՅԻ ՎԱՆՔԸ

Սաղարի մէջ:

Այս վանքին իսկական անունը ըլլալու է Անլոց, իսկ Այլոց կամ Ալնոց անունները աղաւաղում ըլլալ կը թուին: Առաջինն է որ յիշատակարաններու մէջ գործածական է:

Հետեւեալ յիշատակագրութիւնները վանքին պատմութիւնը մեզի կը ներկայացնեն. «Աւարտեցաւ սուրբ մատենան, որ կոչիւր Մաշտոց ձեռամբ արամար եւ փձուն գրչի Կիրակոսի եպիսկոպոսի Տրապիզոնեաց ի գաւառս Սախուայ ի յանապատս Անլոց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Կարապետին, ի թուականիս Հայոց ՁԲԵ (1476), ի խնդրոյ... քահանայի Իգնատիոսի... եւ ամուսնոյ իւրոյ Մինային... աղաչեմք յիշել զճնաւդս Ընքնատիոս քահանային գճայրն իւր զպարոն Ներսէս եւ զմայրն իւր զՏաւնայն եւ զեղբարսն իւր զՄեղիտոնն... եւ զիեսայն զճանիարն... զհաւրեղբայրն զՍաղապուճ... այլ եւ հայցել յԱստուծոյ պահել զբարունապետս գաւառիս Բարեթո զտէր Սարգիս, նայեւ զտեսուչ սուրբ ուխտին Բերթականն զՂազար եպիսկոպոսն եւ զքահանայս զեղջին Աւետիգա զԹորոս երէցն» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. Լազարեան 109 Մաշթոց):

Ասկէ յառաջ 1340ին կը խնդրուի. «Յիշեցէք զմիեղէն եղբայրութիւնն... զընակիչս սուրբ ուխտին Անլոց վանից» (անդ, էջմիածին, Թ. 1529):

Մովսէս արեղան 1486ին արտագրութիւն մը կ'ընէ «Ի յանապատս որ կոչի Անլոց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետին... ի յառաջնորդութեան վանացս տէր Մեղիտոն արեղայի» (էջմիածին, ամսագիր, 1944, էջ 34—37):

Աւետարանի մը մէջ յիշատակագրուած է. «Արդ ես... Յովհաննէս սկսայ զսուրբ Աւետարանս եւ կատարեցի ի ՌձԲ (1653) թուականիս, ի կաթողիկոսութեան Տ. Անանիայի եւ յառաջնորդութեան Տ. Միսիթարայ երկրիս Սաղարեաց ի փոքր մենաստանիս Ալ-

նոցի վանք ի գուռն սուրբ Յովհաննէսի (Թորոս Աղբար, Բ., էջ 340—341, բայց ՌձԲ պէտք է սրբադրել ՌձԲ, Անանիա հակառակաթոս կաթողիկոս է, հմմտ. Սիոն, 1933, էջ 415):

Մկրտիչ արեղան կը պատմէ.

«Ես Մկրտիչ արեղաս, որ մականունն Տանձիկ ասի, եկի (ի Բարբերդ) ի գուռն Աստուածածնին եւ սուրբ Կարապետին, որ մականունն Այլոց ասի, Գ. տարի աստ կացի եւ յետոյ յիշատակ դրի զսուրբ Աւետարանս եւ ոսկած տեսր մի... ի հայրապետութեան տէր Յովհաննէս եպիսկոպոսին, որ մականունն Կէլէ ասի, ի թվականիս Հայոց ՁԾԷ» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. Սաղարեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. Յուլիանէն, Թ. 298): Սոյն Աւետարանին մէջ (Թ. 250ա) կայ նաև. «Արդ վերջին ստացող սուրբ Աւետարանիս տէր Ներսէս արճի եւ պանծալի եպիսկոպոս ի գաւառէս Սախուայ, որ այժմ մականունամբ Բարբերդ յորջորջի... աստուածատէր եւ ցանկալի, գիտուն եւ ճարտար իմաստիւր լի տէր Ներսէս արճի եւ պանծալի եպիսկոպոսին, առաջնորդ Ալնոց վանացս սուրբ Կարապետիս եւ սրբոհո Աստուածածնիս եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, որ աստ կան հաւաքեալ եւ զնեաց զսուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ եւ եղ ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին...»:

Թորոս ՌձԲ թուին կը գրէ Ագամգիրք՝ «Ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին ի վանսն որ է Անլոց եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Պետրոս եպիսկոպոսին եւ միաբանիցս...» (Ակինեան, Յուլ. հայ. Ձեռ. ի Բէյրութ, էջ 10, անտիպ):

Ալնոց վանքը շատոնց ամայացած եւ շարաթացած է (Բիւզանդիոն, 1900, Թ. 1127 եւ 1901, Թ. 1500):

3. ԲԵՐԴԱԿԻ ՎԱՆՔԸ

Սաղարի մէջ. մինչ Պալեան զայս խընդրական կը գտնէ եւ կը փնտոէ Եղեսիայի մէջ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1083), իսկ Դպիր զայն ձերբազնի եկեղեցւոյ հետ կը նոյնացնէ (ուրիշներու հետ, հմմտ. Փունջ, 1892, Թ. 2307):

Բաւական հին վանք է: Արդէն 1305ին Յովհաննէս արեղան ի գաւառիս Սախուայ

ի հռչակաւոր մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշագործ եւ գեղեցկաշէն տաճարիս, որ յանուն սրբուհոյ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց» Աստուածաշունչ մը կ'արտադրէ (Գ. արքեպ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, պրակ Ա, էջ 70): Իսկ 1430ին կը գրուի՝ «Ի գաւառս Սաղարեաց, ի հրեշտակարնակ մենաստանս, որ կոչի Բերդակայ վանք, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս, ի հայրապետութեան Տեառն Կոստ(անդեայ) եւ յեպիսկոպոսութեան գաւառիս Բարբերդ եւ Դերջանայ տէր Աւետեաց... եւ Բերդական անաջնորդ Գրիգոր հարպետն իւր միաբանօքն անասան պահէ...» (Արեւելք, 1904, Թ. 5579. հմմտ. վերը):

Տարիներ յետոյ 1489ին Մովսէս արեղան կը գրէ Յայտաւուրք մը՝ «Ի գաւառս Սախուայ որ այժմ ասի Բարբերթ, ի յանապատս որ կոչի Բերթակ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին յառաջնորդութեան վանացս տէր Լազար եպիսկոպոսին եւ Կիրակոս հարպետին» (Conybeare, Cat. Brit. Mus. էջ 165. Արեւելք, 1903, Թ. 4959):

Ղազար արդէն 1476ին առաջնորդ է (հմմտ. վերը Ալնոցի վանքը): Անոր օրով Մովսէս արեղայն Համալէնցի Բերդակայ վանքի մէջ Աւետարան մը կը գծէ (Արեւելք, 1904, Թ. 5579), ինչպէս եւ նոյնին օրով է որ միեւնոյն տեղը կը գրուի Մաթուսանց կամ Մաթուսանց գիւղի Աւետարանը (Հ. Յ. Տաշեան, Տայք, անտիպ, էջ 144—145):

Բովանդակալից է սա յիշատակարանը. «Արդ ես Յակոբ քաղաքացի թոռն Կարապետին, որ Մեղիսեղին զսուրբ Աւետարանս զնեցի եւ ի Բերթական վանքս եղի ի գուռն սուրբ Աստուածածնի եւ սուրբ Լուսաւորչի յիշատակ հօրն իմոյ Մեղիսեղին եւ մօրն իմոյ Եղիսարէթին...: Արդ ես Յակոբս եւ մայրս իմ Եղիսարեղս զնեցաք զսուրբ Աւետարանս եւ զերկու շուրջառս եւ եղաք ի սուրբ յուխտս ի Բերթական վանս...: Ես սուտանուն Ներսէս արեղայս շորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի գաւառս Սախուայ ի վանքս Բերթակ, ի գուռն սուրբ Լուսաւորչիս եւ սուրբ Աստուածածնիս եւ յառաջնորդութեան սոյն ուխտիս նոյն եղիկիս: Ի միա-

բանութեան վանիցս, զՅոհաննէս մեծ րաբունիս, բան յարտաքնոց չունի կարծիս, յաստուածաշունչ զիրքն խորինս: Տէր Ընտաղէս սրբազանիս, Կարապետս Դոմնեցիս, տէր Յովհաննէսըս Ոստեղցիս, տէր Կարապետս Դերջընցիս, տէր Պետրոս Արզրուցիս, տէր Սարգիսս Քարաւերկցիս, փոքր մալազ մեր Յակոբիկս, տէր Մարտիրոսն չէ մէջլիս, Գալուստ երէցս Սուլացիս, զինն տվող Աւետարանիս, Յակոբ անուն մղտեօիս, եւ մեր միակից Լեւդերիկս, ԺԴ. սարկաւազ են պաշտողնիս, Ը սարկաւազ ի վճարն են սաղմոսիս, Դ այլ սկիզբն ա(րա)մնաւոր մայրն իմ զՄուղան, որ բազում աշխատութեամբ կու տնտեսէ վանիցս. զհոգոյ որդին իմ սիրական, զտէր Կարապետս սրբազան, հոգևոյն սուրբ է մաքրական, մտաւքն արթուն իմաստութեան, հասու եղև սա զըջութեան, զթուխտս կոկեց աշխատութեամբ, զվրէժն առցէ յաւրն յարութեան: Այլ եւ վերստին յիշեցէք... զՅակոբ հոգելին (եւ) զմայրն իւր զԵղիսարէթն եւ զմաւրաքեօին իւր զպարոն տէր Ղազար եպիսկոպոսն, որ կամակից եւ օգնական եղև մեզ գնելոյ զսուրբ Աւետարանս...: Գրեցաւ Աւետարանս ի թուիս Հայոց ԶԿ... թէպէտ որ չէ արուեստ բանիս, մտիկ արաժամանակիս, ԶԽԹ թուականիս Բ. անգամ ի մէկ տարիս, յաղկվազեցի յայս երկրիս, ես ոնց բերեմ զմիտս ի գրիս, ինձ գուժ կու տան մահու կարծիս» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Զեռ. էջմ. 272):

ԶԿ (1518) թուին դրուած Գանձարանի մը մէջ Բերդակի առաջնորդ կը յիշուի Կարապետ արեղան (Փունջ, 1892, թ. 2307), իսկ բաւական նորոգութիւններ կ'ընէ Բերդակի մէջ Գրիգոր եպիսկոպոսը (անդ, թ. 2307):

Այսպէս այս յիշատակագրութիւնները մեզի բերած հասցուցած են Բերդակի առաջնորդներէն եւ հայրպետներէն ոմանց անունները:

4. ԲՆՈՒՅԻ Ս. ԵՂԻՍԱՅԻ, Ս. ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵՒ Ս. ՎԱՌՎԱՌԻ ՎԱՌԻ ՎԱՆՔԵՐԸ

Այս երեք վանքերն ալ Բարերդէն վեց ժամ հեռու Բլուր գիւղի շրջակայքը կը գտնուին: Անոնց պատմութիւնը անձանօթ

կը մնայ (Բիւզանդիոն, 1901, թ. 1502. Փունջ, 1892, թ. 2307): Ս. Վառվառէի ուխտալայր մը կայ Խուսիսի մերձ (հմմտ. Փունջ, 1892, թ. 2311):

5. Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔ

Սպերի Մաթանց գիւղի վանքն է այս, ուր կը գտնուի անյիշատակ ժամանակներէ մնացած փայտախաչ մը (Արեւելք, 1904, թ. 5579):

6. ԳԼԵՈՆՅԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՎԱՆՔԸ

Բարերդի արեւմտեան հիւսիսային կողմը եւ անկէ հինգ վեց ժամ հեռու կայ Գլխոնց գիւղը: Անոր մօտ՝ ապառաժուտ լեռան մը տափաստանին վրայ երբեմն կանգնուած էր Ս. Լուսաւորչի անունով վանք մը, որ այժմ աւերակ է (Բիւզանդիոն, 1900, թ. 1060 եւ Փունջ, 1892, թ. 2307): Կայ համանուն (Ս. Լուսաւորչի) ուրիշ վանք մը Ճիւմա գիւղի մօտ (Փունջ, 1892, թ. 2311):

7. ԵՕՇՔԱՅ ՎԱՆՔԸ

Թորթումի առաջին հոյակապ վանքն է Էօշքայ վանքը համանուն գիւղէն կէս ժամ հեռու: «Շինեալ է ի վերայ բլրածեւ տափարակի...: Շինուածոյն ձեւ զարմանալի է յոյժ եւ հոյակապ եւ ահեղ. կիսարդրոն կամ թէ ասել խորշ խորանաւեղոյն, որ մի միայն է, հասեալ է մինչեւ ցրարձրութիւն եկեղեցոյն, ի նմին բարձրութեան են եւ երկրքին թեւքն հիւսիսային եւ հարաւային, նոյնպէս եւ միւս կողմն որ երկայնեալ ձգի յարեւմուտս կոյս: Ի հաւասար բարձրութեանց չորից կամարածեւ կողմանց առ վերին ծայրիւքն շրջանակ ածեալ բոլորչի զոր վերամբարձ ունին չորեքին սիւնքն ահեղ մեծութեամբ, եւ ի վերայ շրջանակին ամբարձեալ կայ կաթողիկէն հոյակապ ուղղաբերձ ձեւով, պատուհանս երկայնածեւս ունելով շուրջանակի եւ ապա յամենայն կուսէ ի մի ամփոփեալ եւ աւարտեալ ի սրածայր: Ի ներքին կողմն շրջանակին, այսինքն է ընդ մէջ նորա եւ կաթողիկէին, ձեմելիք կան շուրջանակի: Առ խորանաւն երկուստեք աւանդատունք են կրկնայարկը յարեւելս կոյս եւ զարձեալ այլ աւանդատունք ընդ հիւսիս եւ ընդ հարաւ առընթեր կրկին թեւոյն եւ ի նոցանէ քարեղէն սանդղօք յերկրորդն ան-

ցեալ եւ անտի ի վերնայարկս առաջնոցն: Երկուստեք արեւմտեան թեւոյն են այլ եւս կամարակապ սենեակը կամ պահարանք այլ եւ այլ ձեւովք, ի հիւսիսայնոցն ոմն երկայնածեւ եւ այլ ոմն քառակուսի եւ սիւնազարդ, եւ ի հարաւայնոցն ոմն քառանկիւնի եւ առ նովաւ դաւիթ փոքր ընդ որ մի ի մտիցն է եկեղեցոյն եւ առընթեր նորա միւս եւս սենեակ սիւնազարդ քանդակագործ պատկերօք եւ զարդուք ի սիւնան: Չորս են դրուքք եկեղեցոյս...: Արտաքին երեսք որմոց եկեղեցոյն երկուստեք խորանին խորշ գործեալ են անկիւնաւոր՝ հարուստ մի բարձրութեամբ... նոյն ձեւ է եւ երկուստեք կրկին թեւոյն հիւսիսայնոյն եւ հարաւանոյն: Ի հարաւային կողմն ուր աւարտի որմն յարեւելս կոյս ի վերայ ստուար վիմի կան բարձրաքանդակ պատկերք փառահեղ զգեստիւք արեւելեայց եւ գլխարկ նոցա զտակածեւ խոր եւ անփաթոյթ...» (Մարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 86—88. Աղգ. ուսանողութեան Միութեան հը 86—88. Աղգ. ուսանողութեան Միութեան Տարեցոյց 1914, էջ 262. Ալիշան, Նշմարք, Գ., էջ 85. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 838—840):

Այս եւ Խախուսայ վանքին մասին համառօտ կ'անցնինք, այլուր ընդարձակօրէն խօսելու տրամադրութեամբ: Այս վանքը ունի վրացերէն շատ մը արձանագրութիւններ: Անոնցմէ յայտնի կ'ըլլան վանքին շինարարներն ու բարերարներն, որոնք են՝ Ատրնեք սեհ կիրարպաղատ, Բագարատ Իշխան եւ Դաւիթ Մագիսարոս (հմմտ. հայերէն թարգմանութեամբ Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 88—91. հմմտ. նաեւ Շիրակ, 1905, թ. 5, էջ 418—421. Հ. Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, Դ. հտր., Վիեննա 1938, էջ 56):

8. ԻՇԵԱՆԱՅ ՎԱՆՔ

Տայքի Իշխանաց գիւղի մէջ: Ունէր Ս. Խաչի մատուք մը (Հ. Մ. Զամբեան, Պատմութիւն Հայոց, Բ., էջ 535. Ալիշան, Նշմարք, Գ., էջ 91. հմմտ. եւ Յակ. Կարնեցի Տեղագիր վերին Հայոց, էջ 17):

9. ԼՈՒՍԱՆՈՐՁԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՎԱՆՔԸ

Բարերդի արեւելեան կողմը: Անկէ վեց ժամ հեռու:

Լուսանգ գիւղի մերձ: Լեռնաղաշտի մը վրայ: Ուխտի օրը՝ Լուսաւորչի Գիւտ նշխարաց տօնը: Աւերակ (Բիւզանդիոն, 1900, 1060. Փունջ, 1892, թ. 2304): Հին մատուռը իրրեւ թէ Լուսաւորչաէն, իսկ նոր եկեղեցին Կ. Պալեան կառուցած է (Արեւելք, 1904, թ. 5603):

10. ԼՈՒՒԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՎԱՆՔԸ

Բարերդէն եօթը ժամ հեռու եւ անոր արեւմտեան կողմը գտնուող Լոսի գիւղը ունեցած է Ս. Լուսաւորչի նուիրուած վանք մը, որ թէպէտ շատոնց աւերակի կոյտի վերածուած է, սակայն երկարատեւ, մանաւանդ Գիւտ նշխարաց տօնին՝ եղած է ուխտագնացութեան վայր մը (Բիւզանդիոն, 1900, թ. 1060. Փունջ, 1892, թ. 2307):

11. ԽԱՆՈՒՍՅ ՎԱՆՔԸ

Յակոբ Կարնեցին կը գրէ. «Եւ կայ ի մէջ ձորոյն (Թորթումի) մեծամեծ վանորայք Վրաց ի գիւղն Խախու, Ոչկ եւ Իշխան, որ յար եւ նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդիանուպօլիս» (Տեղ. Վեր. Հայոց, էջ 17):

Խախուսայ վանքը Էօշքի մօտ է եւ անոր նման, սակայն անկէ փոքր: Ունի միակ դուռ մը: «Ի դրանէ անտի ընդ երկայնութիւն կողմանն մինչեւ ցորմն արեւմտակողման դաւիթ գործեալ է քարայտակ եւ կամարայարկ, հանդիպակաց կողմանն հաստատեալ ի վերայ սեանց»: Ունի վրացերէն արձանագրութիւն:

Այս վանքին հիմնադիրը «ասի լինել Դաւիթ կուրապաղատ որդի Բագարատայ իշխանապետ Վրաց յամս 876—881, կամ մեծն Դաւիթ կուրապաղատ յելս Ժ. դարու» (Մարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 92. Ալիշան, Նշմարք, Գ., էջ 89—90. Շիրակ, 1905, Ե., էջ 421 եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 125—126. Տարեցոյց 1914, հրտ. աղգ. Ուսանողներու ինստիտուտութեան, Կ. Պ. 1914, էջ 258—264 եւ Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյց, 1921, էջ 194—195) 3:

3 Պալեանի ծանօթ է Խախուի Ս. Բառասնից վանք մը (Բիւզանդիոն, 1901, թ. 1502):

12. ԽԱՂՃԱՆՆԵԱՅ ԿԱՄ ԽԱՂՃԱՆՆԵԱՅ Ս. ԱՍ-ՏՈՒԱՅԱՆԻ ԵՒ Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔԵՐԸ

Տրդատ եպ. Պալեան կը գրէ. «Պաղճա- նեաց վանք Ս. Թորոսի — Բարերդի մէջ — քաղքին հիւսիսային կողմ 2 ժամ հեռու Թում- նայ անուն գիւղին յենարան եղած լեռան մը ստորոտն է Ս. Թէոդորոսի վանքը եւ լեռան վերի կողմն է Ս. Աստուածածնայ վանքը, որոց երկուքնն ի միասին կ'ըսուի Պաղճա- նեաց կամ Պաղճեանեաց վանք Ս. Աստուա- ծածնի եւ Ս. Թէոդորոսի: Թէեւ ժամանա- կին չէն վանքեր, բայց ներկայիս մէջ եր- կուքն ալ ամայի եւ փլած (Բիւզանդիոն, 1901, Թ. 1043. հմմտ. Փունջ, 1892, Թ. 2307):

Բաւական հին վանք է: 1380ին Աւետարան մը կը գրուի՝ «Չե- ոամբ մեղսակաթ եւ փծուն գրչի Յովաննէս ուսուցնականի ի Պախտեաց գաւառի ի սուրբ մենաստանս որ կոչի Պախճա ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Թէոդորոսի» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան, 117):

Իսկ երկու տարի վերջ գրուած Աս- տուածաշունչի յիշատակարանին մէջ կը մտնի «Յիշխմանը գրաջ հովին... գաէր Յովհաննէս, որ ստացաւ զսա ի հալալ ար- դեանց իւրոց եւ եզ ի վանս իւր, որոյ ա- նուն կոչի Պախճան ի գունն Ս. Աստուա- ծածնի եւ Ս. Թէոդորոսին թիւ տօմարա- կան ՊԱ» (Փունջ, 1892, Թ. 2307. Բիւ- զանդիոն, 1900, Թ. 1043 եւ 1901, Թ. 1500): Յովհաննէսի առաջնորդութեան ատեն վան- քին մէջ էին նաեւ տէր Պաշատուր վարդա- պետ եւ Ղազար, Մարտիրոս, Մարգիս եւ Մկրտիչ արեղաները: Անոր մահէն յետոյ գանազան աննպաստ պարագաներու հե- տեանքով վանքը կ'անջքանայ, բայց բարե- բաստօրէն Յովհաննէսի քոյրը՝ Յուստիանէ խաթուն միջոցներ ձեռք կ'առնու գայն վե- րականգնելու. «... եղև պակասութիւն ա- մենայնի մեզ ամենեցուն, եւս առաւել հրեշ- տակարանակ մենաստանին Պաղճանեայ... յա- րեան ոմանք ի մէջն ի մեր ազգականաց եւ հակառակեցան վանիցն եւ ցրուեցին զուխտ եւ գամենայն որ ինչ կայր ի նմա...: Ես նուաստողի քոյր աէր Յովհան եպիսկոպոսի վերստին հաստատեցի գուրբ ուխտն Պաղ- ճեանեայ Ուստիանէ խաթուն եւ պարոն Թո-

4 Գրուած նաեւ՝ «Պախճանեաց վանք» (Բիւ- զանդիոն, 1900, Թ. 1043):

րոս որդի իմ եւ ժողովեցաք զգահ եւ զանօթ սուրբ եկեղեցեաց» (Նօտարք, էջ 6—7, Բիւ- զանդիոն, 1900, Թ. 1043 եւ Փունջ, 1892, Թ. 2307):

Նոյն խնդրին Յուստիանէ այլուր աւելի ընդարձակօրէն կ'անդրադառնայ՝ «Յամի ՊՊԴ (1395) ի հայրապետութեան Տեառն Թէոդո- րոսի եւ մերոյ եպիսկոպոսութեան տէր Յով- հաննիսի Բարերթոյ վիճակի ի սուրբ անա- պատիս, որ կոչի Պախճան առ ոտս սրբուհ- ւոյ Աստուածածնիս եւ Յովհաննու Կարա- պետիս, որ էր յոյժ հոչախաւոր եւ երկնա- նման զեղեցկաչէն յարմարեալ եւ ամենայ- նիւ զարդարեալ: Եւ էին ի սմա բնակեալ յո- լով եղբայրութեանս համակամ եւ միեղէն եղբայրութիւնս եւ անխափան կատարէր ի ձեռն սուրբ կրանաւորացն աղաւթքն եւ պատարագքն...: Արդ ի յետ այսմ զեղեց- կագոյն եւ ցանկալի շինութեան սուրբ ա- նապատիս եղև կէտ կոչման յաստուածային հրամանէն, զի հրաւիրեաց Տէրն մեր եւ ա- րարիչ Քրիստոս յիւր երկնային առաքաստին զրազմածգնոյն եւ գաստուածահաճոյ երա- նաչնորհ եպիսկոպոսն գաէր Յովհաննէս եւ գաէր Մարտիրոս եւ գաէր Ղազարն...: Արդ ի յայսմ գառն եւ ի շար ժամանակիս տրտու- թեանց, զոր եհաս ի վերայ մեր, ես նուաստ ամենայնի քոյր աէր Յովհաննէսին եւ բարե- կամ սուրբ անապատին Պախճանեայ եւ հա- րազատ սիրելի եղբորն իմոյ, անուն կոչե- ցեալ (Յ)Ուստիանէ խաթուն, հանապազ ցա- ւակցարար խոկայի ի տուէ եւ ի գիշերի զշե- նութենէ սուրբ ուխտին եւ գնորին սպասա- ւորացն...: Իսկ սաղրելոյ չարին... յարեան ոմանք ի մէջն ի մեր ազգականաց եւ թիւրե- ցին զմիտս եւ զսիրան իմ սիրելի եղբորն (գ)առաքելաչնորհ եպիսկոպոսին տէր Յովա- նիսին եւ վիճարանեցին զմեզ բանասրկու- թեամբ իւրեանց...: Յետ այսր ամենայնի անցիցս անցանելոց եւ աղէտից տրտու- թեանց տուգանել տուին զմեզ ԺՌ. որպէս այլազգեաց կատարի եւ մարդաղէմ զազանքն այնքիկ: Բայց ես ոչ խախտեցայ ի գորո- վագութ սիրոյ եղբորն իմոյ եւ ոչ նուազե- ցուցի կամ պակասեցուցի զկահ եւ կամ զսպաս սուրբ տաճարին երկնանման, այլ եւ յաջողութեամբն Աստուծոյ, ողորմութեամբ նորին կանգնեցի եւ ժողովեցի զհայրենա- տուր ժառանգութիւնն ի պայծառութիւն սուրբ անապատին յիշատակ ինձ եւ ծնո-

դաց իմոյ պարոն Աստուածասուրին եւ մարն իմոյ Խուժիկ խաթունին եւ եղբարց իմոյ պարոն Այգին եւ պարոն Ամիրին եւ Ազադին եւ կենակցին իմոյ Աւազ պարոնին» (Համամճեան, Յուց. հայ. Ձեռ. Գաղատիոյ, Թ. 85, անտիպ):

Այս յիշատակարանէն կարելի է հետե- ցնել թէ Յովհաննէսին յաջորդներն եղած են Մարտիրոս եւ Ղազար:

Մեր Ձեռագիրներու հաւաքածոյն Թ. 260 Ձեռագրին յիշատակարաններու մէջ կը յի- շուին անունները բարերարներու, որոնք Ս. Թորոսի նուէրներ կ'ընեն եւ անոր կ'օժան- զակեն, սակայն չէ նշանակուած թէ ո՛ր կը դնուի այն (Տաշեան, Մայր Յուց., էջ 663— 666):

Թէեւ ժամանակին, ինչպէս յիշատակա- գրութիւններն ալ կը ցուցնեն, չէն շող վան- քեր եղած են Խրախճանեաց վանքերը, բայց «ներկայիս մէջ երկուքն ալ ամայի եղած եւ փլած» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1043):

13. ԽԱՂՃԻՔԱՆՆԵԱՅ ԿԱՄ ԽԱՂՃԻՔԱՆՆԵԱՅ Ս. ԱՍՏՈՒԱՅԱՆԻ ԵՒ Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔԵՐԸ

Պալեան «Բարերդի հայ վանքերը» յօ- դուածին մէջ կը գրէ. «Կը յիշատակուին նաեւ Պաշարեարի եւ Վարչամակ կամ Վար- սամպէկ անուն երկու վանքեր ալ» (Բիւզան- դիոն, 1901, Թ. 1502): Այսպէս նա Բաշ- քարի վրայ եւ կամ անոր մօտերը երկու վանք գիտէ: Հ. Ալիշանի խօսքերէն այնպէս կա- րելի է հետեւեցնել՝ թէ նա ծանօթ է վանքի մը, ուր Վարչամակ լեռան վրայ գիտէ ուխ- տատեղի մը, ուր Քրիստոսի Վարչամակը գրուած էր: Կը գրէ. «Համչէն, որ է Պաշ Համչէն կայ ի ստորոտս Տէմիրտաղ լեռին, առ որով եւ Պաշէքար լեռն, յորում մե- նաստան հին, ուր պահէին նշխարք Վար- ցանանց եւ ի գագաթան նորին աւանդի պա- հել Վարչամակին Քրիստոսի, վանն որոյ լեռն Վարչամակ կոչեցաւ եւ ի ոամկաց Վարսամպէկ» (Տեղագր. Հայոց մեծաց, էջ 39): Իսկ Բժշկեան գիտէ վանք մը, որ միանգամայն ուխտատեղի է. «Պաշիքեար վանքը մեծ ուխտատեղի է Հայոց եւ այլազ- գաց. այս վանքին քով գտան մեծ գանգակ մի, ուր կայ մեծ գերեզման արջու...» (Պատմութիւն Պոնտոսի, Վենետիկ 1819,

էջ 97): Կոխի ալ Պաշէ(ե)արի վրայ ուխ- տատեղի մը ծանօթ է (Koch, Reise im pont. Gebirge und türk. Armenien, Weimar, 1846, II, էջ 90—91. հմմտ. նաեւ Տաշեան, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա 1921, էջ 28—31. տե՛ս աստ Վար- շամակի վանքը):

Բժշկեանի տեղեկութիւնը (ու վարկածը) ստույգ կը թուի: 1630ին «ի յերկիրն Համ- չէն, ի վիճակս Պաշէքարոյ» Սաղմոսարան մը կը գրուի (Սարգիսեան, Մայր Յուց., էջ 266):

14. Ս. ԽԱՂՃԻՔԱՆՆԵԱՅ ԿԱՄ ՎԱՆՔԵՐԸ

Համչէնի վանքն է Ս. Պաշիկ հօրն հո- գեւորի վանքը, որ Եղնովիտ կամ Եղնովիտ գիւղի մօտ էր եւ օժտուած Ս. Աստուածա- ծին եւ Ս. Սիոն տաճարներով եւ Ս. Վար- դանանց նշխարներով:

Միջին դարու վերջերը հիմնուած կը թուի ըլլալ: Հաւանականաբար իր հիմնա- դիրն ըլլայ Պաշիկ հոգեւոր հայրը եւ կամ անոր բնակավայրն եղած եւ ետքէն ընդար- ձակուելով վանքի վերածուած:

Ս. Պաշիկ հօր վանքի մասին առաջին յիշատակութիւնը Կարապետ Երէցին կը պարտինք: Ոսկեփորիկի մը յիշատակագրու- թեան մէջ կը գրէ՝ «ԹՎին ՋԽԹ (1500) մուտն ի կարճին փետրվարի ԻԸ բարեկենդանին յետի Ուրբաթին աստուածասաստ բարկու- թիւն տեղեաց ի վերայ գեղջիս մերոյ Եղ- նովիտս գաւառիս սուրբ Պաշիկ հաւրն մերոյ, զի եկն ի ձկվայճորն հուսի եւ սուար եհար գեկեղեցին սուրբ Սիոն ժամանոյն...» (Տաշեան, Յուց., էջ 486): Քանի մը թուղթ յետոյ նոյն Կարապետ կը գրէ. «Գրեցաւ ձե- ոամբ մեղսաներկ եւ անարժան Կարապետի ի յանապատս Պաշիկ հոգեւորի ընդ հովա- նեաւ Ս. Աստուածածնի եւ սուրբ Վարդա- նանցս. ամէն 5» (անդ, էջ 486):

Կարապետ Երէց 1503ին կ'օրինակէ Սաղ- մոսարան մը. «Աւարտեցաւ աստուածաշունչ սուրբ քնարս Գաւիթ մարգարէին եւ աղա- թամատոյցս եւ պատարագ տեսարս ձեռամբ

5 1513ին (ՋԿԲ) գրուած Ծարակնոցի մը մէջ կայ. «Գրեցաւ եղանակաւոր տուս յիշատակ է շարայակ- նոց նորհատին եւ ուր (իւր) կողակցին Յիսիմին ի ձեռս տէր Սայակայ եպիսկոպոսին ի գուռն սուրբ Պա- շիկ հօրն. յիշատակ է ով ոք շունի յիշխանութիւն կամ առն(լ)ոյ կամ ծախ(ե)ոյ կամ գրուակ գնեոյ...» (Ոսկեան Հ. Հ., Յուցակ, Բ., Թ. 999):

Մկրտիչ երէց եւ անոր հարսը 1476ին Աւետարան մը յիշատակ կը դնեն «ի վանս Պալախաոյ ի դուրս Ս. Գէորգայ» (Արարատ, 1905, էջ 732):

Կարելոր է հետեւեալ յիշատակագրութիւնը. «Եւ արդ զրեցաւ սա (Սարգստարան) ի թուականութեանս Հայոց ՁԽԴ (1495) ի ստորոտ լերինս հիւսիսոյ ի դուռնս սրբոյն Գէորգեա (Գէորգորեա)... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Յուսիկ վարդապետի եւ մեղուցելոյս Աւետիք արեղի եւ միարան կղբարցս՝ Մարտիրոս արեղին եւ Յովակիմ արեղին եւ Յոհաննէս արեղին եւ Խաչատուր մալազին եւ զայլ միարան սուրբ ուխտիս զուսուսակիցս յիշեալիք...: Գրեցաւ ձեռամբ Աւետիք արեղայի ի վանս Պալախաւոյ ի դուրս սուրբ Գէորգեա զաւրաւարին ի թվին ՁԽԴ» (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Սանասարեան Վարժարանի, էջ 23—24):

Այս վանքին մէջ ժամանակ մը ապրած է Գրիգոր Դարանաղցին, երբ անոր առաջնորդն էր Եղիա Բարերգացին (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 4, 15 եւ 356—357):

24. ՎԱՀԱՆԱՇԻՆՈՒ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Բարերգ քաղաքէն երեքուկէս ժամ հեռու գտնուող Վահանշէն կամ Վէհէնշէն գիւղի վանքն եղած է Ս. Ստեփանոս, որ ապա կոչուած է Ս. Լուսաւորիչ, բայց ոչ՝ Վաղշէնի Ս. Աստուածածին⁸ կամ Օձտեղի Ս. Ստեփանոս, ինչպէս Պալեան կը նշանակէ (Փունջ, 1892, թ. 2307 եւ 2255. Բիւզանդիոն, 1901, թ. 1502): Իսկ Հ. Ալիշան Վահանաշէն կամ Վանշէն Ս. Լուսաւորիչ իրարմէ կը գատէ եւ այդ անուններով երկու վանք կընդունի (Բագմալէպ, 1869, էջ 101):

Վահանաշինու կամ Վահանշինու Ս. Ստեփանոսի 1471ին Աւետարան մը յիշատակ կը արուի (Բիւզանդիոն, 1906, թ. 2897): Արդէն 1521ին ծաղկած վիճակի մէջ էր: Մազաքիա երազագիւր գրիչը (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 407) Գանձարան մը կը գրէ. «Բ գաւառս Խախտեաց, որ կոչի Բաբերթ ի սուրբ յանապատս, որ կոչի Վա-

⁸ Դարբինեան կը գրէ՝ «Վէհէնշէն Բարերգի գիւղերէն է... յիշուած վանքը Ս. Լուսաւորիչ է, որ կեանքն է այժմ» (Բիւզանդիոն, 1906, թ. 2897):

հանշինու վանք ի դուռն սուրբ Ստեփանոսի Նախավկային, Ս. Յակոբա(յ) եւ սուրբ Գէորգեա(յ) եւ այլ սրբոցն եւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Աստուածատուր հարպետին եւ բոլոր միարանիցս եւ միեղէն եղբարցս, նախ տէր Խաչատրին եւ տէր Մկրտչին եւ տէր Աստուածատրին եւ տէր Յուսիկանն եւ տէր Ղուկասին եւ տէր Առաքելին եւ Բ. Սարգիս արեղին եւ Ղազար մալազին եւ Աւետիք միայնակեցին եւ քուերորդւոյն իմոյ Մուրատ սարկառապին» եւն (Conybeare, Cat. Brit. Mus. թ. 56, էջ 139. հմմտ. Ծաղիկ, էջ 15. Փունջ, 1891, 2275):

Մեղի գեւ անձանթ պարագաներու հետեւանքով Ս. Ստեփանոսի վանքը փլուզումի եւ աղքատութեան կ'ենթարկուի. բայց Սրապիոն Վ. Օձտեղցին զայն կը վերաշինէ: Նա կը գրէ. «Այս վանքս աւերակ եւ անմարդարնակ (էր) դարձեր, բու աւերակի եղեալ եւ թէ Աստուածաշունչ, թէ Աւետարան... թէ արտ եւ ջաղաց զամենեսեան պատանդ գորով, վերստին ազատեցի եւ զվանքն վերստին նորոգեցի մինչեւ ցերիս հաղարաց մարշիլս ծախսելով» (Բիւզանդիոն, 1901 թ. 1502): Սրապիոնի առաջնորդութեան ատեն վանքին մէջ էին Ալեքսիանոս, Անտոն, Կիրակոս, Պետրոս, Գրիգոր, Նահապետ, Թորոս եւ Խաչատուր վարդապետները: Սրապիոն, որ իր հօտին արթուն հովիւն եղած է (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 39. Սամ. Անեցւոյ Ժամանակագրութիւն, էջ 203), նոյն չէ Սրապիոն Ուռհայեցիին հետ: Տարբեր անձ է եւ Գր. Դարանաղցիին տուած է վարդապետական զաւագան: Վերջինս բաւական ժամանակ Վահանշինու վանքին մէջ ապրած է:

Հ. Ակինեանի Ձեռագրաց յիշատակարաններու հաւաքածոյին մէջ կան Վահանաշէնի գիւղի եւ վանքի մասին հետեւեալ յիշատակագրութիւնները.

1. «Փառք... շնորհիւն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ... կատարեցի զՈհան գլուխ աւետարանս եւ զԳործք առաքելոցն որ կոչի Յինունք ՁԶԼ (1339) ի թվականութիւնս Հայոց զրջաւ եւ աշխատութեամբ նուստ եւ անարժան քահանայի Առաքելի Բաբերգացոյ ի գեղ Վահանշինոյ» (անդ, Երեւան, 103):

2. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՁԻԵ (1476) ի գաւառս Խախ-

տեաց, որ այժմ Բարերգ, ի վանքս Վահանշինու ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի Նախավկային եւ սուրբ Յակոբայ եւ սուրբ Գէորգեա եւ այլ սրբութեանց որ աստ կան: Ձեռամբ անարհեստ զրջի Գրիգոր արեղի» (անդ, Նուխի Ս. Մինաս եկեղեցոյ Աւետարանը):

3. Արդ զրեցաւ եղանակաւոր Երզարանս որ կոչի Ծարակիոց ի թուարեութեանս Խոսրովային եւ հայկազան թուին ինն եւ ի Ժ. ի յորեւան եւ ի Է. աւերեան. ի գաւառիս Խախտեաց որ կոչի Բաբերթ. ի վանքս Վահանաշինու ի դուռն սուրբ Ստեփանոսին Նախավկային՝ արազահաս սքանչելագործին եւ այլ սրբոցս սուրբ Գէորգեա եւ սուրբ Յակոբա... որ աստ կան հաւաքեալ. ձեռամբ ումեմն... Մաղաքիա անուամբ միայն վարդապետի: յիշատակ ինձ եւ ծնաւդացն իմոց ոսկերիչ Ամիր-Գրիգորին հաւերն իմոց եւ մաւերն իմոց Դշխոյ-Մելիքին եւ եղբարցն իմոց Ամիր-Ջրհանին եւ Խուսիկանին եւ քերն իմոց Ծահգանային եւ որդւոցն Մուրատ սարկառապին եւ Միրումին եւ եղբարորդւոցն իմոց Պարոնին եւ Ամիրին եւ Խուսիկանին եւ զեռարոյս զաւակին իւրոյ Ամիր-Մելիքին եւ այլ ամենայն արեանառու մերձաւորացն իմոց:

«Աղաչեմ զսուրբ պատահողք կամ տեսնելով եւ կամ այլ ինչ պատճառաւ իրիք ի ձեռս աննելով, յիշեցէք ի սուրբ աղաթս ձեր բազկատարած մաղթանաւք եւ թողութիւն մեղաց հայցելով յանարգամեծարէն յԱստուծոյ, միոյն հազար եւ ձեզ լիցի թողութիւն յԱստուծոյ: Այլ աղաչեմ զսրբազան զաւքդ յիշել յաղաթս ձեր զվարդապետն իմ զՅովանէս քաջ բարունապետն եւ զՍարգիս վարդապետն եւ զԱւետիք արեղայն զամենայն առաքինութեանց կատարաւն եւ զհոգեւոր եղբայրն իմ զՅուսիկ վարդապետն, այլ եւ միարանք ուխտիս. Աստուածատուր հայրապետին եւ տէր Խաչատուրին եւ տէր Մկրտիչին եւ տէր Յուսիկանն եւ միւս տէր Աստուածատուրին, եւ տէր Առաքելին եւ տէր Ղուկասին եւ տէր Սարգսին եւ Աւետիք միայնակեցին եւ այլ միեղէն եղբարցս...: Գրեցաւ ի ճշմարիտ արեանակէ, որ կոչի Խլիկեցի Գրիգոր զպրի...» (անդ, Խապայեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. Յուլայէն թ. 1687):

4. «Յիշատակ է սուրբ Աստուածաշունչ գիրքս... տէր Յովանէսին եւ իւր հօրն Մելքիսեղին եւ իւր մօրն Ծնոփորին եւ իւր կողակցին Սալշուկ խաթունին... սվաք զսուրբ գիրքս ի ձեռն Գրիգոր վարդապետին յիշատակ ի վանքն ի Վահանաշինու ի դուռն սուրբ Ստեփանոսու... թվին ՁԶԵ» (1496, անդ, միւսնոյն ցուցակէն, թ. 1033):

25. ՎԱՂՇԷՆԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Այս՝ նոյն ըլլալու է Վահանաշէնի կամ Վահանշէնի Ս. Ստեփանոսի հետ: Պալեանի համաձայն կոչուած է նմանապետ Վաղշէնի⁹ Ս. Աստուածածին, սակայն ճիշդ չենք կրնար համարել: այս երկուքն իրարու հետ յարաբերութիւն չունին: Նա կը կասկածի թէ գուցէ Վաղաշէնի Ս. Ստեփանոս նոյն ըլլայ Խանդավուց Ս. Ստեփանոսի հետ (տեսնել սոյն վանքերը). հմմտ. Բիւզանդիոն, 1901, թ. 1502):

26. ՎԱՐԻՋՆԱՅԻ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Վարիջնայի Ս. Նշանի վանքը միայն անունովը ծանօթ է (Բիւզանդիոն, 1901, թ. 1502):

27. ՎԱՐՇԱՄԱԿԻ ԿԱՄ ՎԱՐՍԱՄՊԵԿԻ ՎԱՆՔԸ

Համշէնի վանքերէն: Աւանդութեան համաձայն անունն առած Քրիստոսի Վարշամակին հոն գտնուելուն եւ յարգուելուն համար (Արարատ, 1898, էջ 227), մինչդեռ Հ. Տաշեան Վարսամբէկ անունը կ'ուզէ սրբապրել Վարսամ կամ ճշգրտոյնս Վարշամ (Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա 1921, էջ 21) եւ զայն կը գտնէ՝ «Վարդան անուան այլակերպութիւն» (Տայք, անտիպ, Ծանօթութիւնք):

Անշան վանք մը եղած կը թուի:

28. ՏՂԱՆՅ ԱՆՍՊԱՏ ԿԱՄ ՍԻՔՍՅԵԼ ՀՐԵՏՏԱԿՍՈՒՅԻ ՎԱՆՔԸ

Սպերի վանքերէն: Ծանօթ քանի մը յիշատակագրութիւններէ: Պատարագամատոյց մը կը գրուի՝ «Ձեռամբ անարժան եւ անարհեստ

⁹ Վաղշէն (= Վանքէն) անուն գիւղ մը կայ Ակնի եւ Արարիկի սահմաններու միջեւ «եւ ունի եօթը կամ տասնուերկու վանք» (Մասիս, 1886, էջ 219—221):

զբնի Յովսեփազի... Ի թվին ՁԻԳ (1474) Ի գաւառս Սպերոյ Ի յանապատս որ կոչի Տրզանց (սա) դրան սուրբ Հրեշտակապետիս...¹⁰ (Գաթըրճեան-Տաշեան, Սրբազան Պատարագամատոյցք, էջ 567):

Տաննակ տարիներ յետոյ. «Գրեցաւ զիրքս որ Շարակնոց կոչի Ի յերկիրս Սպերի, Ի վանքս Միքայէլ Հրեշտակապետի, Ի թվին ՁՃԿԵ (1516, Ֆինկ, Յուլ. հայ. Ձեռ. Ար. Յովհաննիսեանի, էջ 122):

Նոյն տեղը 1581ին Գրիգոր Ժամագիրք մը, և յետոյ Մաշտոց մը (1583) կը գրէ (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պատուրեանէն): Ապա 1592ին՝ «Գրեցաւ զիրքս որ Շարակնոց կոչի Ի յերկիրս Լսպերու Ի յանապատս սուրբ Միքայէլի և սուրբ Կարապետի և սուրբ Նշանացս որ աստ կան հաւաքեալ Ի թվին Ռ և ԽԱ, Ոգոստոս Թ. Ի լաւ և ընտիր աւրինակէ Ուրկիցոյ»¹¹ (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2409):

Ս. Միքայէլի կամ Տղանցի վանքը նոյն իսկ Թուրքերու համար սիրելի ուխտավայր էր (Տաճար, 1911, էջ 305):

29. Ս. Փրկչի վանք

Բարերգի Խուփս գիւղի եօթն ըլուրներէն մէկուն վրայ երբեմն կը գտնուէր Ս. Փրկչի անունով վանք մը: Նոր ժամանակներու շինութիւն (Բիւզանդիոն, 1901, Թ. 1502):

30. ՔԱՐԱՎԱՐԱԿ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՄ ՍՊԵՐԻ ՎԱՆՔ

Իրրեւ կէս աւուր ճանապարհաւ Ի քաղաքէ աստի (Սպեր կամ Իսփիր) Ի հարաւակողմնէ Գոհանամ լեան զառ Ի թափ անհնարին: Ի կող լերինն է մենաստան սրբոյն Յովհաննու Ի տափարակ և Ի զուարճալի

¹⁰ Բարերգի մէջ գրուած յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Գրեցաւ Աւետարանս Ի թուիս Հայոց ՁԻ (1471) Ի յանապոյի զղեակս Բարերգու քաղաքս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Հրեշտակապետի... ձեռամբ անորհաստ զբնի Մեղիսիս սուտանուն երկցու...» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Լազ. ձեռագրանի, Թ. 26). Ասիէ յառաջ 1456ին՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս... Ի քաղաքիս Բարերգ ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետացս և սրբոյն Մարգարի զօրավայրին և սրբոյն Միքայէլ...» (Նոտարք, էջ 183):

¹¹ Գրիգոր Կամախեցի 1651ին «Ի գաւառին Սպերու տեղ, Ի քաղաքին, զոր սցծմ Բարերգ ասի, Ի զրոմն Ս. Աստուածածնի եկեղեցոյն, որ է հուլ. Հրեշտակապետին» Կիր. Գանձակեցիի Հայոց պատմութիւնը կ'արտագրէ (Բ. Պատկանեան, Նշխարք մատենագրութեան Հայոց, Պետերբուրգ 1884, էջ 71):

վայրի, առնթեր ունելով զիւր լուսադրիւր, ուր նստի առաջնորդ քաղաքին, որ է արքեպիսկոպոս, կից ընդ եկեղեցւոյն է մատուռն հանդերձ կաթողիկէիւ, ուր է հանգրտարան նշխարաց ինչ սրբոյն Յովհաննու Մկրտչին, առ որ յաճախեն բազմութիւնք ուխտաւոր¹² (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 94): Ս. Յովհաննէսի վանքը կը գտնուի Քարձոր գիւղի մօտ և ասիէ կը կոչուի նաև Քարձորի Ս. Յովհաննէսի վանք համանուն ուրիշ վանքերէ գանապանուելու համար: Սպերի անունի վանքն ըլլալուն երբեմն պարզապէս Սպերի վանք անուանուած է:

Հայաստանի հին վանքերէն եղած ըլլալ կը թուի: Սանոսեան կը հաւատայ թէ «Սպերի բոլոր յիշատակարանները պարտած է և անոնցմով կարելի է հաստատել «Ս. Յովհաննու վանքին 1500 տարուան գոյութիւնը» (Տաճար, 1911, էջ 305. հմտ. և Բիւզանդիոն, 1900, Թ. 1001 հիմնադիրը Ս. Լուսաւորիչը): Սակայն դժբախտարար անոր գործունէութեան ու ազդեցութեան պատմութիւնը մեզի չէ հասած: Ծառ քիչ են մեր տեղեկութիւնները և աւելին ալ յոյս չկար գիտնալով որ ինչպիսի կացութեան մասնուած է Սպերի շրջանը: Միւրաք սարկաւազը՝ «Ի Սպեր գաւառ յանապատս որ կոչի Քարձորու վանք (հայկական ՌՃԼՁ թուին 1687) յառաջնորդութեան վանացս Պօզոս վարդապետի» Յայամաւուրք մը կը գրէր (Արեւելք, 1904, Թ. 5579. 1906, Թ. 6281): Սանոսեան տուած է այս վանքին — զոր անոր խօսքերուն համեմատ պէտք չէ շփոթել Պղնձէվանքի հետ — վերջին շրջաններու վանահայրերու անունները՝ Թորոս Վ., Ներս. Վ. Փափագեան, Յովհաննէս եպ., Կարապետ եպ., Տիրատուր Վ. Կարնեցի, Մկրտիչ Վ. Բարերգցի, Նիկող. քհ. Հիչնցի, Գարր. քհ. Կարթեցի, Արրահամ Վ., Գարուստ քհ. Կիսկիմցի, Պօղոս Վ., Ահարոն Վ. Բաղդեցի, Ներսէս Վ. Մշեցի, Կարապետ Վ. Պէկոյեան, Կարապետ Վ., Համազասպ Վ. (Արեւելք, 1906, Թ. 6281 և Թ. 703

¹² «Ունի զղեակ մի պարսպաւոր շինեալ Ի վերայ ճորտի գետոյն, որ սցծմ Լսպեր ասեն... և ունի վանք մի հրաշալի անուն սրբոյն Յովհաննու Մկրտչին կառուցեալ, որ է սցծմ միարանակեցաց տեղիք և ամենայն տարի Սաղիբարայի տօնին զման անդ ուխտաւորք բազումք... և բնակիչք երկրին բովանդակ Հայք, որ զնայեալ հասանէ մինչև Ի գիւղն Սոսեւջուր և ունի վանք երկու և այլ եկեղեցիք բազում, որ սցծմ աւերեալ և ամայի կան Ի ձեռս Տաճկաց» (Յակ. Կարնեցի, Տեղ. Վեր. Հայոց, էջ 16—17):

Չեռագիր Նամականի Վիենն. Միթ. Մատենագրանի, էջ 227):

Ս. Յովհաննէս ոչ թէ միայն Հայերու, այլ և Թուրքերու (կոչուած՝ Հիւսէին տէտէ) սիրուած ուխտավայրն էր: Ուխտի օրն էր խաչի տօնը (հմտ. Տն. 1): Ունեցած է շատ հող ու թեմ, հին Աւետարան մը: Ենթարկուած է Կարնոյ վիճակին (Տաճար, 1911, էջ 305. Արեւելք, 1903, Թ. 5430, 1906, Թ. 6281. Koch, Reise im Pont. Gebirge, Weimar, 1846, II, էջ 48. Տաշեան, Ակնարկ մը Հայ հնագրութեան վրայ, Վիեննա 1898, էջ 19—20. Չարրհանէլեան, Մատենագրան էջ 19—20. Չարրհանութեանց, 157. Աճա-հայկական թարգմանութեանց, 157. Աճա-սեան, Յուլ. հայ. ձեռ. Վարժապետ, 1900, Թ. 1001, րանի, էջ 12. Բիւզանդիոն, 1900, Թ. 1001, 1902, Թ. 1831, ուր Պալեան այս վանքը երեք խորան — Իւչքիլիսէի հետ կը շփոթէ, հմտ. Արիշան, Այրարատ, էջ 528):

31. ՔԱՐԱՎԱՐԱԿ Ս. ԽԱՉԻ ԿԱՄ ՈՒՐԱՍՈՒՐ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ

Բարերգի վանքերէն, Երբեմն հռչակաւոր, բայց վաղուց արդէն հիմն Ի վեր կործանած, սակայն և այնպէս դեռ Չատկին սյցերուած ուխտավայր: Ծինուած է Քարավրակ գիւղի առջև տարածուած տափասանի վրայ (Փունջ, 1892, Թ. 2307. Բիւզանդիոն, 1901, Թ. 1500):

32. ՔԱՐԱՎԱՐԱԿ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ

Բարերգի Քարավրակ գիւղի միւս վանքն է Ս. Նշանի վանքը, որ սոյն գիւղէն կէս ժամ հեռու է և անոր հարաւային կողմը հովիտի մը մէջ հիմնուած է: Կ'աւանդուի թէ անոր հիմերուն մէկ խորշին մէջ շէջ մը սուրբ իւղ թաղուած ըլլայ: Ծարաթացած է և հողերը զիւղացիներու ձեռքն ինկած (Բիւզանդիոն, 1901, Թ. 1500 և Փունջ, 1892, Թ. 2307 և 1891, Թ. 2287):

33. ՔԱՐԱՎԱՐԱԿ ՎԱՆՔԵՐԸ

Բարերգէն գրեթէ 30 քերտեար դէպի արեւմուտք կայ Քսանթազ գիւղը, որ սոյն անունը իրրեւ թէ առած ըլլայ անոր մէջ գտնուած քսան վանք-եկեղեցիներու մէջ պահուած քսան թագերու պատճառով (Հայրենիք, ամսագիր, Թ. 7, էջ 46):

34—35. Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ (ԽՈՒՓՍԻ) ՎԱՆՔ ԵՒ ՔԻԼԻՍԵ ՏԵՐԵՍԻ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ

Բարերգէն Երկուքուկէս ժամ հեռու Խուփս գիւղի մերձ Վանքեր լեռնազաշտին վրայ շինուած էր Ս. Քրիստափորի նուիրուած վանք մը, որ շատոց կործանած ու ամայացած է: Սիրուած ուխտատեղի և հանգստարան Քրիստափոր անուն սրբակեաց անձի մը: Ունեցած է բաւական հող (Բիւզանդիոն, 1899, Թ. 691, 1901, Թ. 1502. Արեւելք, 1899, Թ. 4046, 1902, Թ. 5057, 1903, Թ. 5303, 1905, Թ. 1881 և 5906 և Փունջ, 1891, Թ. 2248, 2276, 2279. 1892, Թ. 2304, 2307, 2311): Հոս «յառաջնորդութեան տէր Յովհաննէս Վ. Ստամպուլցուն» Գրիգոր Խիսեցի ճաշոց մը կը ստանայ և զայն 1742ին յիշատակ կը դնէ՝ «Ի դուռն սուրբ սքանչելի ուխտին Քրիստափոր առաքելոյն Ի ձեռն այժմու քահանայից տէր Անդրէասին, տէր Խաչատուրին և Գրիգորին» (Արեւելք, 1905, Թ. 5906):

Համանուն վանք մըն ալ կանգնած էր Բարերգի արեւելեան-հարաւային կողմը, անկէ կէս ժամ հեռու, Քիլիսէ տէրէսի ըսուած ձորին մէջ: Ժամանակին Ս. Յովհաննու մատուռ մըն է եղեր, բայց ապա անոնցմով մատուռ մըն է եղեր, բայց ապա Կարապետ Բարերգցիին ջանքերով վանքի վերածուած: Օտուած առատ հողերով (Բիւզանդիոն, 1901, Թ. 1502 և Արեւելք, 1905, Թ. 5881):

Քրիստափորի վանքը Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքին հետ 1895ին աւերուածի կ'ենթարկուի (Արարատ, 1896, էջ 87):

Կայ և վանք մը Ս. Քառասնից վանք Խախոյի (Բիւզանդիոն, 1901, Թ. 1502. հմտ. Խախոյ վանքը):

36. ՕՋՏԵՂԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՄ ՎԱՂՇԵՆԻ

Բարերգի Օճտեղ կամ Օստեղ գիւղի վանքն է Ս. Լուսաւորչի վանքը¹³: Անոր մասին Հ. Ինճիճեան հետեւեալ տեղեկութիւնները կու տայ՝ «Եկեղեցին և մենաստան ազգիս Հայոց սուրբ Լուսաւորիչ է Ի քարաժայռ տեղուջ յորմունս եկեղեցւոյն արտաքուստ նաև Ի վերայ ապառաժին ուրեք ուրեք, ուր շատ և ուր սակաւ կան օճք խիտ առ խիտ գմիմեամբք պատատեալք, բայց առ

¹³ Գր. Գարանապետի կ'անուանէ լոկ՝ Ոստեղ-վանք (Ժամանակագրութիւն, էջ 404):

Հասարակ քարացեալք: Ասեն բնակիչք թէ յառաջագոյն բազմութիւն օձից կային յայտեղի եւ ոչ սպառէին, յայն սակա կոչեցաւ Օձտեղ, բայց ապա յաղօթից առն սրբոյ ճգնաւորի ուրուք բարձան եւ ի նշան սքանչելեաց դարձան առհասարակ ի քար» (Նոր Հայաստան, էջ 96):

Պալեան Վահանաչէնի կամ Վաղչէնի¹⁴ Ս. Ստեփանոսի վանքը Օձտեղի¹⁵ Ս. Լուսաւորչի հետ կը նոյնացնէ եւ նմանապէս կը հարցնէ թէ միթէ կարելի չէ՞ մտածել որ Խանդավառ վանքը կանխաւ Օձտեղի Ս. Լուսաւորչի կոչուած ըլլայ եւ ապա Վաղչէնի Ս. Ստեփանոս յորջորջուած (Բիւզանդիոն, 1901, Թ. 1502 եւ 1720), որուն սակայն դրական պատասխան կարելի չէ տալ (Հմմտ. վերը):

Գր. Դարանաղցին կը հաղորդէ՝ «Եւ այս եղև ի թվին Ռիժ (1599) եւ ոմն ծերարեղայ Թումայ անուն ի նոյն վանացն թաղեալ էր գնա եւ եկեալ ի Բարերդու Ոստեղավանքն պատմեաց երկու վարդապետացն մեր Սրապիոնին եւ Ղազար վարդապետին, որ էին ի նոյն ժամին երկոքին ի միասին եւ վանուց առաջնորդին Թաղէոսի եպիսկոպոսին եւ այլ միարանիցն առաջի» (Ժամանակագրութիւն, էջ 404—405):

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ԼԵՉԱՐԵԱՆ ՏՈՒՄ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳՅԵՐ)

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Աշխատասիրեց՝ ՅՈՎԱԷՓ ԹԱԳԷՈՍԵԱՆ

(Շարունակութիւն)

Գ Լ ՈՒ Ն Բ .

ԿՈՄՍ ՅՈՎԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՅ (1735—1801)

«Հասարակական կարիքները պիտի բարարուեն իր հասարակութեան լուսոյն ներկայացուցիչների միջոցներով»:

Գէորգ Բանանեան:

Ա .

Յովհաննէս Լազարեանցը՝ ցեղապետ Ղազար Նազարեան Լազարեանի աւագ որդին էր, ծնուած Ն. Զուղայում 1735 թ. նոյեմբեր 23ին:

Յովհ. Լազարեանը բնութիւնից օժտուած էր մեծ շնորհներով ու առաքինութիւններով՝ տաղանդաւոր, եռանդուն, գործունեայ, բնաւորութեամբ՝ բարեհամբոյր, մեծ տակտով ու քաղաքագէտ: Նա կարողացաւ համեմատաբար իր կարճ կեանքի ընթացքին՝ Եկատերինա Բ. կայսրուհու եւ Պաւել Ա. կայսեր ժամանակ հասնել մեծ պաշտօնների եւ արժանանալ նրանց մշտական վստահութեան, հովանաւորութեան ու բարեկամութեան:

Մ. Մսերեանցը նրա մասին ասում է. «...եւ թուէր իմն, թէ առանձին ինչ ոգի հանաքայ յերկնից պարգեւելոյ առաջնորդէ նմա յամենայնի»:

Լազարեան ձեմարանի տեսուչ (հետագայում՝ վերատեսուչ) Գէորգ Բանանեանը իր ճառի մէջ, ասուած ձեմարանի 50ամեայ յորելեանի առթիւ կայացած հանդիսաւոր հաւաքոյթին, հետեւեալ կերպով է բնութագրում ձեմարանի հիմնադիր կոմս Յովհ. Լազարեանին.

«Եկատերինա կայսրուհու ժամանակակից կոմս Յովհաննէս Լազարեանը, աւագագոյնը իր եղբայրների մէջ, բռնում է պատուաւոր տեղ իր դարաշրջանի հռչակաւոր մարդկանց շարքում: Նա փայլում էր նոյն

¹⁴ Կայ Վաղչէնի Ս. Թորոս անուն վանք մը Ակնի եւ Արաբիկի միջեւ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1043):
¹⁵ «Ի դեպէն Օձտեղոյ» էր Սրապիոն Բարսեղին» (Տաշեան: Մայր Յուլ. հայ. Ձեռ. Վեհն. Միթ. Մատ., էջ 409—410):

բարձր շնորհներով, ներշնչուած էր նոյն վեհ գաղափարներով, որոնք զարդարել էին ու խանդավառել պետական մեծ մարդկանց սերունդը: Նրա լայն ծանօթութիւնը Արեւելեան աշխարհի հետ, նրա հմտութիւնը Ֆրանսական ու պետական գործերում, փայլուն ընդունակութիւնները, նրա նուիրումը իր նոր հայրենիքի շահերին՝ բաց արին նրա առջեւ դործունէութեան լայն աստղեր: Նրա բազում կարեւոր ծառայութիւնները, մատուցուած պետութեան, արժանացան Մեծ կայսրուհու բարեհաճ վերաբերմունքին դէպի նա, իսկ նրա խորհուրդներն Արեւելքի գործերի մասին ստացան մեծ կշիռ ու արժէք կառավարական շրջաններում:

«Միաժամանակ կենդանի պահելով իր հոգու մէջ ջերմ գգացմունքներ ու նուիրում դէպի իր հայրենակիցները, որոնք տառապում էին մահամեղական լծի տակ, նա իր կեանքի նպատակը դրեց թեթեացնել նրանց վիճակը: Այդ մեծահոգի միտքը զուգահեռ պետութեան շահերին, որոնց նա ծառայում էր: Եւ նա նուիրուեց նրա գործառայում էր: Եւ նա նուիրուեց սրտի ամբողջ զօրութեամբ, շինայելով ո՛չ նիւթական միջոցներով, նրա նիւթական միջոցներով ու բարոյական օժանդակութեամբ էր, որ ծնունդ տուին Սեւ եւ Ազով ծովերի ափերին առեւտրական կայաններ, ուր եւ ապաստան գտան տաճեռն նուիրատուութիւնները յօգուտ այդ քաղաքների եւ մշտական խնամքը նրանց բնակիչների հասարակական կարիքների մասին հանդիսանում են բաւազոյն յուշարձաններ այդ հռչակաւոր մարդու գործունէութեան: Բայց ապրելով ու գործելով իր ամբողջ կեանքի ընթացքում հասարակութեան եւ իր հայրենակիցների օգտին, կոմս Յովհաննէս Լազարեանը կամեցաւ իր փառաւոր գործերի շարքը պսակել մի այնպիսի սիրազորութեամբ, որ միանգամայն համապատասխանում էր նրա վեհ հոգուն: Նա աւելի քան որ եւ է մէկը շատ լաւ հասկանում էր, որ հասարակական կարիքները պիտի բարարուեն իր հասարակութեան լուսոյն ներկայացուցիչների միջոցներով: Այս գիտակցութեամբ ներշնչուած, նա վճռեց իր կարողութեան մի խոշոր մասը յատկացնել իր հայրենակիցների մտաւոր ու բարոյական վե-

րածնութեան գործին: Նրա մէջ հասունացաւ մի վսեմ միտք՝ կառուցել մի դպրոց հայերի համար ուստական կայսրութեան կենտրոնում եւ մահուանից առաջ նա իր ուխտը յանձնեց իր կրտսեր եղբոր, պարտադրելով նրան իր կամքի իրադրութեամբ այն միջոցներով, որ նա կապելով թողնում էր¹»:



Յովհաննէս Լազարեան

Այդ կտակով կոմս Յովհ. Լազարեանը թողել էլ 200.000 ուրբի թղթադրամ կամ 57.142 ուրբի արծաթ, ի յիշատակ իր վաղամեռիկ որդի Յարութիւն Լազարեանի:

Այդ գումարով էլ, համաձայն հանդուցեալի կտակի, 1815 թ. հիմնուեց Մոսկուայում Լազարեան ձեմարանը, որ եւ դարձաւ հայ չքաւոր երեխաների մտաւոր կրթութեան ու բարոյական դաստիարակութեան վառ օջախը:

Լէօն իր երկու հեղինակութիւնների մէջ՝ «Հայկական Տպագրութիւն» եւ «Յովսէփ կաթողիկոս Արղութեան», յաճախ է յիշատակում Լազարեաններին ու գրուատում նրանց գործունէութիւնը:

Վերջին գրուածքի մէջ նա հետեւեալ կերպով է բնութագրում Յովհաննէս Լազարեանին.

¹ Տե՛ս էջ 15—16 «ձառք եւ հաշուաւորութիւն, արտասանուած հանդիսաւոր հաւաքոյթում Լազարեան ձեմարանի Արեւելեան Լեզուայ 50ամեակի առթիւ»: Մոսկուա. Տպարան Լազ. ձեմարանի: 1865, 4⁰, էջ 38 + 91 + 6 + 8 + 12 = 155: Թուական լեզուով: